

Ա. Ս. ՇԱՐՈՒՐՅԱՆ. ՍՐԲՈՒՇԻ ՏՅՈՒՍԱՐ*

Հետադարձ մի թուցիկ հայացք հայ գրականության պատմության դարերի խորքից ձգվող շղթային՝ տակավին չի կարող ընկալելի դարձնել, թե որ օղակը ինչ ամբողջուն ունի, Հետևաբար պահանջվում է դառնում այդ շղթայի մանրագնին ուսումնասիրությունը, ուստի և խրատուսելի է երիտասարդ գրականության Ալբերտ Շարուրյանի մենագրության երևան գալը՝ հայ աշխարհիկ վիպասանուհու մասին:

Իր առջև խնդիր ունենալով ցույց տալ գրողի խաղացած դերը մեր գրականության մեջ, նրա հրապարակախոսական գործերի ու գեղարվեստական ստեղծագործության հիմնական հատկանիշները, բացահայտել գրողի կյանքի ու գործի շուրջը ծագած բազմաթիվ ու իրարամերժ կարծիքների ճշմարտացիության աստիճանը, Շարուրյանը, քաջատեղյակ ուսումնասիրվող նյութին, տվել է Սրբուհի Տյուսարի կյանքի ու ստեղծագործության առաջին լուրջ ու խորը վերլուծությունը:

Այս է գրախոսվող մենագրության առաջին և հիմնական արժանիքը:

Ամենից առաջ կենսագրության մասին, Ծ՛րբ է ծնվել, ի՞նչ ուսում է ստացել, Ծ՛րբ է գրել այս կամ այն գործը, մի խոսքով, գրողի գիտական կենսագրությունը շարադրելիս Շարուրյանը իր աչքի առջև է ունեցել շատ թյուրիմացությունների ճշման դժվարությունը և միջնորդավորված օղակների մանրակրկիտ ուսումնասիրությամբ հասել ճշմարտացի, համոզիչ ապացուցման:

Սրբուհի Տյուսարի ստեղծագործական կյանքը համատեղվեց անցյալ դարի այս շրջանի հետ, երբ հայոց պատմության մեջ ոչ միայն առկա էր մասնատված հայրենիքի իրողությունը, այլև մոլեգնում էր սուլթանական Թուրքիայի արյունոտ քաղաքականությունը, Թուրքական գեհնի այդ ահավոր պայմաններում անգամ, օսմանյան լծի ներքո՝ հոգևոր բարձր կուլտուրայի ունեցող ժողովուրդները ստեղծում էին արժեքներ, Վայրենի հայահալածության այդ պայմաններում վճռական նշանակություն էր ստանում գրականության զարգացումը, հայ դպրոցների ու կրթական-յուսավորական հիմնարկների (ընկերությունների) հիմնումը: Եվ ինչպես մեր գրողներից շատերը, այնպես էլ Տյուսարը 80-ական և նախորդ թվականներին ձեռնամուխ եղավ այդ կարևոր գործին: Ժամանակակիցների վկայությամբ Տյուսարը կրթական շարժման սգործուն անդամներին մեկը եղած է», ունեցել է «հանրային շատ գնահատելի և օգտալից գործունեություն»: Տյուսարը այդ գործին օժանդակում էր և՛ նյութական, և՛ կազմակերպչական, և՛ գիտական աշխատակցությամբ: Նա առաջիններից էր այն հայ կանանցից, որոնք ձեռնարկեցին կնոջ լուսավորության գործը: Տյուսարը հրապարակում է «Աշխարհաբար հայ լեզուն» աշխատությունը, որը, ճիշտ է, գիտական ուսումնասիրություն չէր, բայց կրթոտ պաշտպանություն էր աշխարհաբար լեզվի:

Սրբուհի Տյուսարը մեր գրականության պատմության մեջ այն գրողն ու հրապարակախոսն է, որին թերևս ամենից շատ է զբաղեցրել կնոջ ազատագրության հարցը: Տեսնելով կնոջ անիրավահավասար ու ծանր վիճակը, Տյուսարը իր հրապարակախոսության մեջ, ապա իր վեպերում արծարծեց այդ հարցը, ջանաց դեղատոմս գտնել, փորձեց հասարակությունից կնոջ համար սղամարդուն հավասար իրավունքներ պահանջել: Իր ժամանակի խոսք կանանց անգործության մասին», «կանանց աշխատության սկզբունքը» և այլ հոդվածներում ու վեպերում Տյուսարը իբրև կնոջ իրավահավասարության միջոց-դեղատոմս առաջարկում է աշխատանքը, մանավանդ հայ կնոջ համար: Մենադրողը Տյուսարի այս գաղափարին սերտորեն միաձուլ է համարում նաև նրա այն միտքը, թե կնոջը նախ պետք է ազատագրել ստրկական վիճակից, և իրավացիորեն եզրակացնում. «Այն, որ կնոջ աշխատանքի հարցի լուծումը հրապարակախոսը (Տյուսարը.—Վ. Գ.) կապում է նրա ազատագրման հետ, նրա աշխարհայացքի ուժեղ կողմն է» (էջ 70):

Տյուսարի հրապարակախոսությունը նախապատրաստեց վիպագրին, և 1883—86 թթ. ծնունդ առան նրա երեք վիպերը: Վիպագրության անցնելու Տյուսարի միտումն այն էր, որ իր գաղափարները մարդկանց հաղորդեի «ախորժելի ձևի ներքո», այսինքն գեղարվեստի միջոցներով:

* Ա. Շ ա Ր Ո Ւ Ր Յ Ա Ն, Սրբուհի Տյուսար, 1963, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն:

Տյուսարի երեք վեպերի («Մայտա», «Սիրանույշ», «Արաքսյա կամ վարժուհին») մանրամասն վերլուծության ժամանակ մենագրության հեղինակ Ա. Շարուրյանը առաջնորդվել է օրյեկտիվ, անալոգ գրականագետի բարեխղճությանը։ Նա, անդրադառնալով վեպերի մասին ժամանակին եղած կարծիքներին, բանասիրական ու գրականագիտական քննությանը ճշմարտություն է արձանագրել, չխնայելով անգամ հեղինակին։ Այս և նմանօրինակ մյուս դեպքերում ճշմարտությունն է եղել Շարուրյանի չափանիշը։ Օրինակ, խոսելով «Արաքսյա կամ վարժուհին» վեպի մասին, Շարուրյանը գրում է, որ «վեպի կոնֆլիկտը ծայրաստիճան պայմանական է», որ վեպի նյութը «հայթայթված է միամիտ ու անհամոզիչ ելանակով» (էջ 169) և այլն։

Ընդոտ քննողներով վիպասանուհու տեղը մեր գրականության պատմության մեջ, նրան դիտելով որպես վերջին մոհիկանն արևմտահայ ռոմանտիկ վիպագիրների, Ա. Շարուրյանը բացահայտում է Տյուսարի ռոմանտիզմի քաղաքական արմատները ու աշխարհայացքի սնուցման աղբյուրները։ Տյուսարը դժգոհ ու հիասթափված է իրականությունից և իր իդեալները ձգտում է եթերի մեջ փնտրել։ Իրական հողից կտրվելն էլ հենց անհամոզիչ է դարձնում գեղարվեստական հնարանը, այն դարձնում ռոմանտիկ, գաղափարները շեն ձուլվում կերպարներին և աչք է ծակում շինծու, խարխուլ կառուցվածքը նրա վեպերում։

Ի դեպ պետք է նշել նաև այն, որ Շարուրյանը միաժամանակ թյուրատես քննադատներից պաշտպանել է Տյուսարին՝ ճշտելով ու պարզելով նրան վերագրված սխալ տեսակետները, ինչպես օրինակ այն, թե իբր Տյուսարը սիրո ազատության գաղափարով անբարոյականության արդարացման է նպաստել։ Մինչդեռ ելնելով հայ կնոջ ճնշված, ստրկական վիճակից, Տյուսարը հայտարարում էր, թե կինը իր սիրով է երջանիկ։ Հայտնի է նաև, որ իր վեպերում Տյուսարը ժամանակի ապականված սիրուն, հերիզանների սիրուն հակադրում է անբիծ, անդավաճան, անգամ ռոմանտիկ սերը, Մայտայի սերը։ Տյուսարը համարձակորեն ասում է, որ մարդկությանը վնասում է ոչ միայն անիրավությունը, այլև կրոնը։ Այս Տյուսարի կողմից խիզախ քննադատություն էր։

Տյուսարը իր վեպերում հասարակությանը հուզող հարցեր էր բարձրացնում, ուստի և նրա գրքերը անաղմուկ չէին անցնում։ Նրա վեպերի լույս ընծայումն ամեն անգամ ընդունվում էր թեք ու դեմ կարծիքների արտահայտող բազմաթիվ հոդվածներով։

Այդպես անցավ գրողի կյանքը։ Այն գրողի, որն իր առաջ քաշած հարցերով առաջադիմական շատ կողմեր ունեցավ, թեև դրանց լուծման ուղիները պատկերացրեց ռոմանտիկորեն։ Չնայած նրա վեպերի թերի կողմերին, նրանց մեջ դաստիարակչական շատ բան կա, կա իրականության քննադատություն, կան լավ իրականության հումար մտահոգված հեղինակի անկեղծ տրամադրությունները։ «Մայտա» վեպը արևմտահայ աշխարհաբար վեպերի մեջ առաջին գործն է, որ սոցիալական բովանդակություն ունի։

Տյուսարը առաջին հայ գրողն էր, նաև հայ անդրանիկ վիպասանուհին, որ գեղարվեստական գրականության մեջ բարձրացրեց կնոջ ազատագրության կարևոր խնդիրը։ Սա Տյուսարի պատմական ծառայությունն է հայ գրականությանը։

Թերևս մենագրության մեջ ուշագիշտ ընթերցողը կգտնի նաև թերություններ՝ փաստական նյութով շատ ավելի ծանրաբեռնում, մի միտքը ապացուցելու համար քշով չբավարարվել (երբ արդեն համոզիչ է), կենսագրական ոչ շատ կարևոր մանրամասների մեջըրերում։ Սակայն դրանք այնպիսի թերություններ են, որոնց հետ կարելի է, թերևս, նաև համաձայնվել ու նման «ավերորդություններն» անհրաժեշտ գտնել, պատճառաբանելով, թե մենագրությունը Տյուսարի կյանքն ու ստեղծագործությունը այսպես մոտիկից ու մանրազնին քննության առնող միակ գործն է։

Ի դեպ շմոռանանք ասել, որ գրքի մեկ այլ կարևոր արժանիքն է գրքի վերջում զետեղված հավելվածը, որ Տյուսարի գործերի ու նրա մասին հրապարակված ուսումնասիրությունների և հոդվածների թերևս լիակատար մատենագիտությունն է և շատ օգտակար Տյուսարով զբաղվողների համար։

Ամփոփենք. Ա. Շարուրյանի «Սրբուհի Տյուսար» մենագրությունը բարեխիղճ ու շնորհալի գրականագիտական գործ է և հաստատում է երիտասարդ հեղինակի հաջողությունը։

ՎԱԶԳԵՆ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ